

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 20-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն:

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը:

* * *

Հունիսի 21-ին, կիրակի.—Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս վրդ. Հովնանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ» (Ա. Դավրիժեցի) բնաբանով (Տես էջ 50):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունիսի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

* * *

Հունիսի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

* * *

Հուլիսի 5-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Լերինք ամենայն այսօր ցնծացեն ընդ մեծապայծառ փառսն Սեպուհոյ գերազանց լերինն, քանզի ի նմա բնակեցաւ սուրբն Գրիգոր՝ սիւն լուսոյ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ» (Շարական) բնաբանով:

* * *

Հուլիսի 9-ին, հինգշաբթի.—Սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ:

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց եկեղեցու վանահայր

Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*
* *

Հուլիսի 12-ին, կիրակի,—Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն վրդ. Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո» (Ղուկ. Ա 42—43) բնաբանով:

*
* *

Հուլիսի 19-ին, կիրակի.—Բարեկենդան Վարդավառի պահոց:

Այսօր իրենց անդրանիկ պատարագները մատուցեցին. Մայր տաճարում՝ Տ. Սեպուհ աբղ. Չուլջյանը, Ս. Աստվածածին եկեղեցում՝ Տ. Սիոն աբղ. Ադամյանը, Ս. Հռիփսիմե եկեղեցում՝ Տ. Նավասարդ աբղ. Կճոյանը, Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում՝ Տ. Մերովբե աբղ. Իսախանյանը, և Ս. Գայանե եկեղեցում՝ Տ. Աբրահամ աբղ. Մկրտչյանը:

Նորընծա աբեղաները պատարագի ընթացքում քարոզ խոսեցին, ուր ի մասնավորի ընդգծեցին իրենց պատրաստակամությունը՝ իրենց իմացությունն ու նվիրումը ի սպաս դնելու հայ ժողովրդին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն: